Հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի տնօրեն,
իրավ. գիտ. թեկնածու

Լ.Ա. Ղազանչյան
26 հունիսի 2020թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ՍԱՍՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

«ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ» թեմայով

ԺԲ.00.02- «Հանրային իրավունք» (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Երկրի պաշտպանությունը որպես պետության գործառույթ առաջնային նշանակություն ունի պետության սահմանադրական գործառույթների համակարգում: Այս փաստն արդեն իսկ առաջ է բերում հետազոտական խնդիր՝ պարզել երկրի պաշտպանությանը նվիրված սահմանադրական կարգի հիմունքի իրացվածության աստիճանը սահմանադրական և օրենսդրական կարգավորման կառուցվածքում:

Երկրի պաշտպանության գործառույթը բավականին բարդ, բազմատարր ու բազմակողմանի գործունեություն է: Իրավական պետության մեջ դրա ապահովման կարևոր միջոցներից է իրավական կարգավորումը, դրա արդյունավետությունը, պաշտպանության խնդիրների լուծման նպատակամղվածությունը: Իր հերթին երկրի պաշտպանության իրավական ապահովումն սկսվում է Սահմանադրության

սահմանադրական կարգի հիմունքներից, այնուհետև կոնկրետացվում սահմանադրական հիմնական իրավական ինստիտուտներում, հատկապես պետական կառուցակարգի օրենսդիր և գործադիր մարմինների գործառույթներում: Իրավական կարգավորման այս աստիճանները անհրաժեշտ է ենթարկել հատուկ սահմանադրաիրավական հետազոտության, որի նպատակն է՝ բացահայտել դրա ամբողջականությունը, համակարգային միասնությունը, վեր հանել այդ կարգավորման մեջ առկա իրավական խնդիրները, իմաստավորել դրանք, մշակել դրանց իրավական լուծումները:

Երկրի պաշտպանության խնդրի լուծմանն ուղղված սահմանադրական գործառույթը առավել կարևորվում է կոնկրետ երկրի աշխարհաքաղաքական առանձնահատկությունների պատճառով: Դրանից կախված պետությունը որոշակիորեն ավելի շատ է կարևորում իր պաշտպանության խնդիրը: Երբ շրջակա աշխարհաքաղաքական միջավայրը պարունակում է ավելի քիչ հավանական սպառնալիքներ, վտանգներ, ապա պաշտպանության գործառույթի իրականացման չափերը, մասշտաբներն ու ինտենսիվությունը որոշակիորեն նվազում են: Այս տեսանկյունից խնդիրը ՀՀ-ի համար դառնում է ավելի հրատապ, քանզի նրա աշխարհաքաղաքական դրությունը բավականին բարդ է, դրանում սպառնալիքներն ու վտանգները ավելի շատ են: Սրանով պայմանավորված պաշտպանական համակարգի սահմանադրական և ճյուղային իրավական կարգավորումը պետք է լինի գրեթե կատարյալ, իսկ դրան հասնելու միջոցը գիտական հետազոտությունն է, պաշտպանության կառուցակարգի իրավական տարրի վերլուծությունը, դրանում առկա խնդիրների վեր հանումը, լուծումների առաջադրումը:

Պաշտպանական հարաբերությունների սահմանադրական կարգավորման հիմնահարցերի տեսական իրավական հետազոտման հրատապության հիմքերը գալիս են նաև պաշտպանական համակարգի, հատկապես դրա կառավարման և իրավական կարգավորման տարրերի ձևավորման պատմաիրավական միտումներից: Որոշ պետությունները ունենալով հարուստ պատմական փորձ, ունեն նաև լավ մշակված, փորձարկված պետաիրավական պաշտպանական կառուցակարգեր: ՀՀ-ն չունի այդպիսի պատմական-իրավական փորձ:

Բայց պետք է նշել, որ Սահմանադրական բարեփոխումների վերջին գործընթացը արմատական վերակառուցում իրականացրեց նաև պաշտպանական հարաբերությունների կարգավորման նորմատիվային հիմքերում, որը հատուկ վերլուծության կարիք ունի:

Գրախոսվող աշխատանքի գիտական նորույթն աչքի է ընկնում նախ այն համգամանքով, որ հեղինակը սահմանադրական իրավունքի գիտության ու ռազմական արվեստի հիմնադրույթների միավորման միջոցով համակարգված հետազոտել և ամփոփել է ՀՀ պաշտպանության ոլորտի հարաբերությունների սահմանադրական առկա կարգավորման իրավական հիմնական հարցերը՝ ատենախոսության նպատակով նախորոշված հետազոտական խնդիրների

շրջանակում: Այդ ուղղությամբ հետազոտությունները եզակի են ու շատ կողմերով չուսումնասիրված: Այս համատեքստում հեղինակին հաջողվել է վեր հանել պաշտպանական սահմանադրական հիմնական ինստիտուտների խնդրահարույց կողմերը, առաջարկել դրանց կարգավորման ավելի արդյունավետ, երկրի պաշտպանության շահերից բխող լուծումներ, որոնք համահունչ են սահմանադրական արդի տեսության ու սահմանադրական սկզբունքների պահանջներին:

Ատենախոսական աշխատանքը թեմայի մասով լրացնում է իրավագիտության մեջ նկատվող հետազոտությունների պակասը, իսկ որոշ հիմնահարցերում նաև տեսական-իրավական վերլուծության բացերը, ուղենշում է նոր հետազոտական թեմաներ: Ատենախոսական հետազոտության իրականացման արդյունքում գիտական նորույթ պարունակող հիմնադրույթներն ամփոփված են աշխատանքի եզրակացություններում, պաշտպանության ներկայացվող հիմնադրույթներում:

Ատենախոսության տեսական նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ երկրի պաշտպանության կառավարման համակարգի սահմանադրական հիմնահարցերի հետևողական վերլուծության արդյունքները կարող են օգտագործվել ոլորտի իրավական կարգավորման հիմքում ընկած հայեցակարգերի, դրանց կարգավորման տեխնիկաիրավական կողմերի բարելավման համար, նպաստել պաշտպանական ոլորտի ռազմաքաղաքական կառավարման ավելի ճկուն, արդյունավետ կառավարման տեսլականի կայացմանը: Ատենախոսական հետազոտության միջոլորտային բնույթով պայմանավորված դրա արդյունքները նշանակություն ունեն ոչ միայն սահմանադրական ու վարչական իրավունքի, այլև պետության և իրավունքի տեսության, ռազմական արվեստի տեսության և այլ գիտական ոլորտների համար:

Ինչ վերաբերում է աշխատանքի գործնական նշանակության, ապա պետք է նշել, որ հետազոտական արդյունքները կարող են օգտագործվել սահմանադրական, պաշտպանական բարեփոխումների ընթացքում, ինչպես նաև պաշտպանության համակարգի կառավարման վերին մակարդակի սահմանադրական կարգավորման հարցերը շոշափոխ իրավական առարկաների դասավանդման ընթացքում:

Ատենախոսության կառուցվածքը թույլ է տվել հեղինակին համակարգային, բազմակողմանի, ամբողջական և ճիշտ եղանակներով լուծել հետազոտության թեմայի վերաբերյալ առաջ քաշված խնդիրները: Ունի գիտական արժանահավատ մակարդակ, աչքի է ընկնում մոտեցումների ու արդյունքների գիտական նորույթով, ունի ներքին միասնություն, համալիրություն, համակարգվածություն, հարուստ միջոլորտային աղբյուրագիտական հիմքեր: Ակնհայտ է նաև աշխատանքի արդիականությունը և դրա արդյունքների գործնական նշանակությունը մեր օրերի արտակարգ կառավարման պայմաններում:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված

գիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում հեղինակի հրատարակած վեց հոդվածները լիարժեքորեն արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Վերը նշվածի հետ մեկտեղ պետք է արձանագրել, որ աշխատանքում առկա են որոշակի բացթողումներ և վիճելի առաջարկություններ, որոնք հանգում են հետևյալին.

1. Որպես բացթողում կարող ենք նշել այն հանգամանքը, որ հեղինակն իր հետազատության հիմքում դրել է միայն ՀՀ 2015 թ. Սահմանադրությամբ ամրագրված պաշտպանական հարբարերությունների կարգավորման տեսլականը, դրանից բխող իրավակարգավարումները: Ցանկալի կլիներ անդրադարձեր կատարել նաև ՀՀ 1995 թ. Սահմանադրությամբ, ինչպես նաև 2005 փոփոխություններով Սահմանադրությամբ ամրագրված երկրի պաշտպանության կառավարման համակարգի սահմանադրական հիմնահարցերին և փորձել համամատել ներկա համակարգի հետ:

2. Կարծում ենք, որ չի կարելի համաձայնել հեղինակի այն առաջարկության հետ, որ անհրաժեշտ է որպեսզի ընտրվի ու ամրագրվի համաշխարհային փորձին համահունչ պատերազմական իրավիճակի համար նախատեսված օրենսդրման պարզեցված ընթացակարգ: Օրենսդրման ընթացակարգը, և՛ խաղաղ, և՛ պատերազմի ժամանակ ոչ միայն որակյալ ու արդյունավետ օրենսդրման երաշխիք է, այլև օրենսդրման ոլորտում կամայականության, չարաշահումների, սուբյեկտիվության կանխման կարևոր ընթացակարգային երաշխիք է, հետևաբար կարիք չկա սահմանել շեղումներ այդ ընթացակարգից, ստեղծել ժողովրդավարության վտանգներ:

3.Կարծում ենք, որ թեմայի տեսական հիմքերի մեջ ատենախոսը բավականին տեղ է հատկացրել ռազմական գիտության տարբեր ոլորտների՝ ստրատեգիայի, օպերատիվ արվեստի և մարտավարության (տակտիկայի) տեսական հետազոտություններին: Երևի թե հեղինակը պետք է փորձեր մի փոքր ավելի քիչ ուշադրություն դարձնել դրանց, փոխարենը ավելի մեծ քանակով օգտագործեր արտասահմանյան և հայաստանյան սահմանադրագետների աշխատանքները, սահմանադրական-իրավական կարգավորման տեսության ոլորտի հետազոտությունները:

Պետք է նշել, որ մատնանշված նկատառումներն ունեն մասնակի և խորհրդատվական բնույթ, որոնք չեն կարող ազդել Սասուն Բաղդասարյանի գիտական աշխատանքի ընդհանուր դրական արժանիքների վրա:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան, իսկ Ս. Հ. Բաղդասարյանի կողմից հրատարակված հոդվածներում լիարժեքորեն արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Հետևաբար, Սասուն Հովհաննեսի Բաղդասարյանի «Պաշտպանության ոլորտում հարաբերությունների սահմանադրական կարգավորման իրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսական հետազոտությունը իրենից ներկայացնում է արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական-կիրառական նշանակություն ունեցող ավարտուն, ինքնուրույն ուսումնասիրություն: Իսկ հետազոտության արդյունքները սահմանադրագիտության, իրավունքի տեսության, ռազմական և վարչական իրավունքի գիտության ոլորտի համար ունեն մեծ նշանակություն:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Սասուն Հովհաննեսի Բաղդասարյանի Պաշտպանության ոլորտում հարաբերությունների սահմանադրական կարգավորման իրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման Կանոնակարգով սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.02 - Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի՝ 2020 թվականի հունիսի 22-ի նիստում, որին մասնակցել են բաժնի վարիչ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հ. Մ. Ստեփանյանը, գլխավոր գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր Գ. Հ. Սաֆարյանը, ավագ գիտաշխատողներ, իրավագիտության թեկնածուներ Ա. Վ. Շուքուրյանը, Ա. Ա. Աբրահամյանը, Բ. Վ. Ղազինյանը, Լ. Ա. Ղազանչյանը:

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի պետաիրավական
հետազոտությունների բաժնի վարիչ,
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Հ. Մ. Ստեփանյան**